— Ահա՛ քրդական բռնապետութեան ճիւղակտուր եղած կոճղը... — ասաց Ասլանը, ծերունու ետեւից նայելով: Յետոյ դարձաւ դէպի մեզ այդ խօսքերով.

— Ես իսկապէս հակառակ եմ ազնոականութեան գաղափարին, բայց կը ցանկանայի, որ հայերը ազնոականներ ունենային: Երբ ժողովուրդը զարգացած չէ, երբ նա դեռ մի ուրիշ գիտակցութեան չէ հասած, ազնոականութիւնը միշտ յարմար միջնորդ է դառնում նրա բողոքը արտայայտելու, երբ ինքը՝ ազնոականութիւնը, նոյն ժողովրդի հետ ճնշոած դրութեան մէջ է գտնւում եւ նրա տառապանքներին մասնակից է լինում: Նայեցէ՛ք այդ ծերունի քրդին, այդ ոտքից եւ ձեռքից զրկոած անդամալոյծին, հազարաւոր քրդեր չեն կարող այն մտածել, ինչ որ դա է մտածում, հազարաւոր քրդեր չեն կարող այն զգալ, ինչ որ դա է զգում: Իր խրճիթի մարած օջախի նման մխում է նրա սիրտը, երբ իր ցեղի ազատութիւնը կորած է տեսնում: Երբ մենք ազնոականութիւն ունէինք, երբ տակաւին բնաջինջ եղած չէին նախարարական տները, ամէն անգամ, երբ ժողովրդի կողմից բռնութեան դէմ բողոք էր յայտնւում, նրա նախաձեռնութիւնը տալիս էր նախարարութիւնը: Եւ մեր հայրենիքի թշնամիները՝ յոյները, պարսիկները, արաբացիք, վերջը թաթարները, լաւ հասկանալով ազնոականութեան նշանակութիւնը, սկսեցին հետզհետէ ոչնչացնել նախարարական տները, որպէսզի կատարելապէս տիրել կարողանան մեր հայրենիքին:

Ինձ համար այժմ շատ բան պարզ էր: Ծերունի քրդի պատմութիւնից ես լիակատար տեղեկութիւն ստացայ Որսորդի անձնաւորութեան մասին, գիտէի նրա փառաւոր անցեալը, գիտէի նրա աղէտաւոր անկումը, գիտէի նրա խորհրդաւոր ներկան: Ինձ համար պարզ էր եւ Ղարա-մելիքների յեղյեղուկ պատմութիւնը. ես ճանաչում էի այդ ազնոական տոհմի վերջին ժառանգին՝ Կարօյին, ես գտնւում էի նրա հօր դժբախտ ամրոցի փլատակների մօտ, այն ամրոցի, որ սկսեալ Ռշտունի ախարարներից, քսանեւմէկ դարերի ընթացքում, մի ձեռքից միւս ձեռք անցնելով, վերջը հասել էր նրա հօրը եւ որից դաւաճանութեամբ յափշտակել էին քրդերը: Կարօն նոյնպէս գիտէր այդ բոլորը, գիտէր իր ծագումը, գիտէր, թէ ի՞նչ էին կորցրել իր հայրերը: Բայց ես հաւատացած էի, որ նա նոյն եռանդով կը գործէր եւ նոյն անձնուիրութեամբ կաշխատէր սրբելու նեղեալների արտասուքը, եթէ գիտենար, որ ինքը մի անյայտ գռեհկի որդի է: Երբ այդ միտքը յայտնեցի Ասլանին, երբ, Կարօյին օրինակ բերելով, ասացի, որ տոհմային ազնոականութիւնը միակ պայմանը չէ, որ մարդ ձգտում է դէպի ազատութիւնը, նա պատասխանեց.